ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/181

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Կոփ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.08.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.08.2020թ. թիվ 26/26-1/12064-2020 գրությամբ «Կոփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.08.2020թ. թիվ 04/31.2/20793-20 գրության հիման վրա 12.08.2020թ. թիվ 26/26-1/12064-2020 գրությամբ նախաձեռնել է «Կոփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կոփ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Կոփ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.08.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կոփ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին:

Տվյալ ընթացակարգի հրավերի 2.4-րդ կետի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «35» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցված լինելը:

բ) սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները:

Հայտերի գնահատման չափանիշները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
Մասնագիտական փորձառություն	35
Աշխատանքային ռեսուրսներ	35
Գնային պայման	30
Ընդամենը	100

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես. «Կոփ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը, դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը, աշխատակազմում ներգրավված մասնագետների համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41–րդ կետը՝ առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկումը»:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 07.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 9.1 կետի համաձայն՝ «ԿՈՓ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասնակի ... /տես՝ թիվ 2 արձանագրությունում/, իսկ նույն արձանագրության 10.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով սույն արձանագրության 9.1 կետը՝ «Կոփ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

<u>Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության

հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

1. «Կոփ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները /ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացված անհամապատասխանությունների շտկումը կատարվել է մասամբ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք դիտարկել նաև մի շատ կարևոր հանգամանք. արդյոք ՍՊԸ-ի կողմից անհասկանալի պատճառներով հայտը մերժելու հանգամանքով պայմանավորված՝ ՍՊԸ-ին կարող է որակվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և արդյոք այդ գործողությունը հիմք է՝ մասնակցին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու համար:

Որպեսզի մասնակցին վերագրվի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն կամ առնվազն այդպիսին որակվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

1. հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

2. մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը.

3. ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Որպեսզի Ընկերությանը վերագրվի գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանձին, բացահայտելով, արդյոք Ընկերության կողմից այդ հիմքերից որևիցե մեկը խախտվել է, թե՝ ոչ:

1. Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված «Կոփ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմքը, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հավաստումը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Կոփ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

2. Մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում որակավորման չափանիշների պահանջներին մասին հայտով «Կոփ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Կոփ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

3. Ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

«Կոփ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, քանի որ դեռևս «Կոփ» ՍՊԸ-ն դեռևս չի ճանաչվել ընտրված մասնակից և դեռևս գնահատող հանձնաժողովի կողմից չի պահանջվել ներկայացնելու որակավորման ապահովում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 2 կետի համաձայն /Հրավերի համապատասխան էջը կցվում է/՝

Հայտերի գնահատման չափանիշները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
Մասնագիտական փորձառություն	35
Աշխատանքային ռեսուրսներ	35
Գնային պայման	30
Ընդամենը	100

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Այս պարագայում՝ հատկանշական է այն հանգամանքը, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու /19-րդ դար/ վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը, որի դեպքում մասնակիցների հայտերի գնահատումը իրականացվում է բացառությամբ միավորների հաշվարկի տեսքով և մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին չբավարարելու հանգամանքը, ըստ Ընթացակարգի հրավերի 2.4 կետով սահմանված պահանջի, հիմք է միավորների գների նվազեցմանը, այլ ոչ թե հայտը մերժելու՝ ինչը նախատեսված էր նաև ընթացակարգի հրավերով, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ հրավերով որպես մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս պահանջվել է կոնկրետ ոլորտի փորձառություն, այն է՝ բացառապես պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն: Եվ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը մերժելու հիմքում դրվել է այն

հանգամանքը, որ ՍՊԸ-ն չի հիմնավորել իր փորձառության առկայությունը (այդ թվում նաև մեկ աշխատակցի աշխատանքային փորձը) հենց այս ոլորտում: Մինչդեռ վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողությունը հանդիսանում է լիցենզիավորվող գործունեություն, և տվյալ լիզենզիայի շրջանակներում իրականացվում է տեխ. հսկողություն ցանկացած ոլորտի շինարարական աշխատանքների նկատմամբ: Ուստի սահմանելով տեխնիկական հսկողության նման նեղ ոլորտ, այն է՝ բացառապես պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման, Պատվիրատուն սահմանել է ակնհայտ խտրական պահանջ, որն էլ իր հերթին «ԿՈՓ» ՍՊԸ-ին կանգնեցրել է “Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում” ներառվելու վտանգի առջև:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք ուսումնասիրել ևս մեկ այլ կարևոր հանգամանք, այն է՝ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, որի պարագայում միայն պարզ կլինի, թե ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքերի, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. ոիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները: Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր: Օրինակ՝ թիվ ՍՑ-ՆԳ-2020/74 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի, ուստի հնարավոր չէ արձանագրել Ֆ/Մ էդգար Հովակիմյանի կողմից Օրենքի

6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ոատիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ որոշեցի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2020թ. թիվ 26/26-1/5124-2020 գրությամբ Ֆ/Ա էդգար Հովակիմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով, Ընթացակարգի Հրավերի պահանջների խախտմամբ, Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Կոփ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Կոփ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել “Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Կոփ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԼԳ-2020/181 ընթացակարգի շրջանակներում 21.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 12.08.2020թ. թիվ 04/31.2/20793-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախարարության կողմից 2020 թվականի օգոստոսի 5-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով կազմակերպված տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացին հայտ է

ներկայացրել «Կոփ» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի օգոստոսի 5-ին առաջարկվել է «Կոփ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, ստորև ներկայացնում եմ վերոնշյալ մասնակցի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը և խնդրում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/181 ընթացակարգի քննության շրջանակներում 21.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն իր կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոփ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 6.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը, դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը, աշխատակազմում ներգրավված մասնագետների համապատասխան փաստաթղթերի պատճենները:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41–րդ կետը, առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու 6.1 ենթակետով արձանագրված անհամապատասխանությունները:

4. Գնահատող հանձնաժողովը, 07.08.2020թ. շարունակելով նիստը, 9.1 ենթակետով արձանագրել է, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասնակի, մասնավորապես. նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրերը (Ն.Գետաշենի գյուղապետարանի հետ 17.03.2014թ. կնքված և Ծովինար համայնքապետարանի հետ 25.07.2019թ. կնքված) չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում աշխատանքային փորձի ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը սյունակները լրացված են թերի, տեղեկանքը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից մեկի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով արձանագրության 9.1 ենթակետը, Ընկերության հայտը մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2020թ. թիվ 26/26-1/12064-2020 գրությունը, «Կոփ» ՍՊԸ-ի 20.08.2020թ. գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 12.08.2020թ. թիվ 04/31.2/20793-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) Մաս 1-ի 2-րդ կետի 2.4-րդ ենթակետի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «35» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցված լինելը:

բ) սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները:

բ. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «35» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա) պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատակազմը

N	Որակավորումը	Մասնագիտական փորձը		
		գործունեության ոլորտը	կատարած աշխատանքը	նվազագույն մասնագիտական փորձը

1	շինարար	պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնում	պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	Վերջին 10 տարվա ընթացքում 5 տարվա մասնագիտական փորձ և վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ ծառայություն
2	ճարտարագետ-կոնստրուկտոր	պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնում	պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	Վերջին 10 տարվա ընթացքում 5 տարվա մասնագիտական փորձ և վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ ծառայություն

բ) մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հետևյալ ձևով՝

Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

Հայտերի գնահատման չափանիշները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
Մասնագիտական փորձառություն	35
Աշխատանքային ռեսուրսներ	35

Գնային պայման	30
Ընդամենը	100

Մասնակցի կողմից ներկայացված <u>հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք</u>, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Հրավերի Մաս 1-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են</u>***: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Այսպես՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն իր կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոփ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 6.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը, դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը, աշխատակազմում ներգրավված մասնագետների համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41–րդ կետը, առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու 6.1 ենթակետով արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը, 07.08.2020թ. շարունակելով նիստը, 9.1 ենթակետով արձանագրել է, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասնակի, մասնավորապես. նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրերը (Ն.Գետաշենի գյուղապետարանի հետ 17.03.2014թ. կնքված և Ծովինար համայնքապետարանի հետ 25.07.2019թ. կնքված) չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում աշխատանքային փորձի ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը սյունակները լրացված են թերի, տեղեկանքը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից մեկի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով արձանագրության 9.1 ենթակետը, Ընկերության հայտը մերժել է:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/145» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և Ընկերության հայտի մերժման հիմքերը, արձանագրում եմ, որ Հրավերով սահմանված չէ մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորի նվազագույն շեմ, որի պայմաններում հայտը ենթակա է մերժման, մինչդեռ Հրավերի Մաս 1-ի 2-րդ կետի 2.4-րդ ենթակետի բ) պարբությամբ սահմանվում է, որ ***մասնակցի կողմից ներկայացված <u>հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք</u>***, ոչ գնային պայմաններին տրված գնահատականն ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա, հետևաբար, հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և Ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետը, Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա չէր մերժման:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընկերության հայտը մերժվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար արձանագրում եմ, որ «Կոփ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.08.2020թ. թիվ 26/26-1/12064-2020 գրությամբ «Կոփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**